

All communications and subscriptions to be addressed to
DR. M. S. GABRIEL,
 Editor of the "HAIK"
 An Armenian fortnightly,
Political and Hygienic.
 202 W. 23rd St., New York.
 TERMS TO SUBSCRIBERS.
 For all countries, One year \$2.00
 Single copy, \$0.10

ՀԱՅՔ

Ամենայն թղթակցութիւնք
 և վճարմունք պարտին ուղ-
 ղուիլ առ խմբագրութիւն :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 (Ամենեկրի համար)

Տարեկան 2 Թալէռ
 Մէկ թիւը 10 Դէնթ

ԿԻՍՏԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M. D.

Տէր-խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

202 W. 23rd St., New York City, U. S. America

Ա. ՏԱՐԻ


ՆԻԻ ԵՈՐԲ, ՅՈՒՆՎԱՐ 15 1891

ԹԻԻ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գեր. Հ. Գ. Ալիշանի « Սիսուան » .— Հայոց
 վերջին Թագուհին .— Կազմակերպութիւն Հայ գաղթա-
 կանութեան .— Ծրագիր Կեդրոնական Յանձնախմբի .—
 Ուղերջ աւ. Պ. Պրայս .— Հայք յԱմերիկա .— Զուրն իբր
 դարման .— Այլ եւ այլ .— Ընդ . Գումարում Հայոց ի նիւ
 եորք :

ԳԵՐ. Հ. Գ. ԱԼԻՇԱՆԻ ՍԻՍՈՒԱՆԸ



Հ. ԱԼԻՇԱՆԻ Վ. ԱԼԻՇԱՆ Rev. P. L. Alishan.
 the great Armenian Poet and Historian

Գեր. Հայր Ալիշան, Հայ բանաստեղծն, աշխարհա-
 գիր և հնախօս, այսօր մեծագոյն հեղինակութիւնն է
 Հայոց պատմութեան և Հայաստանի տեղագրութեան
 վերայ, Զկայ ծաղիկ, բոյս, բլուր, լեռ, բերդ, շէն, և
 աւերակ Հայաստանի և Կիլիկիոյ մէջ, չկայ հայկա-
 կան դրամ, թագ, կուռք, սովորոյթ որ անծանօթ լի-
 նի նմա. վաթսուն տարիէ իվեր կ'ուսանի զՀայս և
 յիսուն տարիէ իվեր կը գրէ մեր հայրենեաց վերայ,
 իւր հմտութիւն բազմաճիւղ և խորին է միանգամայն :

Նա մին է այն ընտիր անձնաւորութեանց որք Մխիթար-
 եան Միաբանութեան մեծագոյն փառքն և ազգին պա-
 տիւ եղած են և ընդ որս կրնայ մեր ցեղ պանծալ և
 հրաշանալ : Հայր Ալիշան իւր ծերունազարդ հասակի
 մէջ դեռ զարմանալի բեղմնաւորութիւն կը ցուցնէ մտաց
 և իւր մեծագոյն երկոյ մի քանին նոր կուգան յերեւ :



Կատարինէ Գոռնարոյ
 Վերջին անուանեալ Թագուհի Հայոց

The last Queen of the Armenians

Սքանչանօք տեսանք եւ քննեցինք նորա հոյա-
 կապ մատենան « Սիսուան » որ կը ճառէ Կիլիկիոյ եւ
 Ռուբինեանց վերայ ներկուռ և մանրաքնին հմտութեամբ :
 « Սիսուան » այ լեզուն պարզ գրաբար է, և զարդարուած
 պատկերներով : Որպէս զի մեր հայրենակցաց գաղափար
 մի տուած լինիմք այս գերընտիր գրքի բարձր արժանիքին
 վերայ ներկայ թուով կուտամք անոր ընտրեւագոյն պատ-
 կերներէն մին, և ուրիշ մի քանինք եւս պատրաստ

ունիմք մեր յառաջիկայ թուերուն համար-

Կատարինէ Գոռնարոյ է յետին անունակիրն Թա-
գաւորութեան Հայոց: Յետ մահուան վերջին Լեւոնի,
Կիպրոսի Թագաւորք, իբր ազգակիցք իւր և հօրեղորն,
իրենց կոչման և դրամոց վերայ կը յաւելուն « Թագաւոր
Հայոց » տիտղոսն եւս, այսպէս շարունակուելով հասան
մինչեւ ցԹագուհին Կատարինէ Գոռնարոյ, որոյ ժամա-
նակն է 1473 ինչ 1489:

ԱՌ ԱԶՆԻԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՍ ԻՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ,

« Հայք » ներկայ թիւէն սկսեալ կը լինի պատկե-
րազարդ:

Մեր թերթ կարծուածէն աւելի սուղ կը լինի
մեզ, բայց գինն տարեկան երկու թաւեր միայն
ըրած եմք որպէս զի դիւրամատոյց լինի այն ամէն
կարգի հայրենակցաց:

Որոնք որ կը բազման ստանալ մեր թերթ,
թող հաճին փութով յղել մեզ բաժանորդագինն,
վասն զի թերթիս 3րդ թիւէն սկսեալ միայն անոնց
պիտի յղեմք, որոց հասցէն և բաժանորդագինն մեզ
հասած լինին:

— Այն Զուիցերիացի հայաստնն որ անցեալ ամառ
ատենախօսեց մեր ընդ ժողովոց մէջ, ընտիր յողում
մի ուղղած է « Հայք »-ի, զոր կը թողումք յառաջիկայ
թուին:

— « Հայք »-ի յառաջիկայ թիւն պիտի պարունակէ
Ռուբինեան Հարստութեան Հայկական դրամներու 33
պատկերներն: Հեազհետէ պիտի աւամք « Մայր Արաբ-
սի », « Որդիք Հայկայ », « Իրիւր ձայնից » և այլ երգեր
իրենց բուն նօթաով հանդերձ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

Հայ ժողովուրդն հազար տարիէ ի վեր սկսած է իւր
հայրենի երկրէն գաղթելով ցրուիլ իսթիւռս աշխարհի,
և սակայն, զարմանալի՝ իրողութիւն, տակաւին այսօր
Հայաստանի և նորա շուրջ կը գտնուի մեր ցեղին կէսն:
Հայկական հոգեբանութեան ուշագրաւ իրողութեանց
մին է խորին և խանդակաթ յարումն Հայուն իւր հայ-
րենի իրաց և անձանց: Հայ ազգն վաղ իսկ կորսուած
պիտի լինէր առանց այս սրտի յատկութեան: Այժմ իսկ
գոյութեան անտանելի պայմանաց մէջ, հրոյ և սրոյ ար-
հաւրաց առջև կը մնան հարիւր բիւր Հայեր բուն Հա-
յաստանի մէջ: Կը հեծեն, կը հառաչեն, կը կողոպտուին,
կը բանտարկուին, կը հրկիզին, յօշ յօշ կը պատառին,
բայց սակայն կը մնան յարեալ հայրենի հողոյն, այն
հայրենի հողոյն, ուր քալած, շնչած, գոսացած և հանգ-
չած են մեր Տիգրաններ և Վարդաններ, և որ տապանն
է մեր Ներսէսներու և Սահակներու սուրբ նշխարաց:

Ո՛ր գաղթեալ հայրենակիցներ, կը լսէ՞ք լալիւն Հայ
ծնողաց ի վերայ մահուան սրախողխող զաւակաց և առե-
ւանգման կուսագեղ զստերաց: Կը լսէ՞ք զչաջիւն շըղ-

թայից բանտարկեալ եղբարց: Կը լսէ՞ք աքսորեալ և բերդար
գել հայրենակցաց հառաչներ: Կ'երեակայէ՞ք արտասուալի
աչերն Հայ մանկուոյն և արիւնաներկ բազուկներն Հայ
երիտասարդաց առ ձեզ ուղղեալ: Բանտարկեալ միայն
նոքա չեն որք թրքական բանտից մէջ նետուած են,
այլ բոլոր Հայեր ընդհանուր և անբայառիկ բանտար-
կութիւն կը կրեն նոյն իսկ իրենց տանց և շինից մէջ:
Միայն լրագիրք և քարոզիչք չեն որք իհարկի են գրել
և ըսել միայն ինչ որ տիրողք հրամայեն, այլ բովանդակ
ժողովրդեան լեզուն և միտքն կապեալ կաշկանդեալ են:
Հայ ժողովուրդն ողջոյն չլթայուած դրուած է իբր
ողջակէզ սեղանին վրայ և թրքական բռնապետութեան
հուրն կը լափէ զնա:

Թողունք որ սոլառի Հայն Հայաստանի հողոյն վե-
րայ: Թողունք որ Հայաստանի մահուան վճիռն արտա-
սանուի: Եթէ թողունք, պատմութիւնն յաւիտեան պի-
տի չներէ մեզ:

Ո՛ր Հայ իշխաններ, միլիոնաւորք, վաճառական-
ներ, գիտուններ որ կը գտնուիք Օսմանեան սահմանե-
րէն դուրս Հնդկաստանէն ցեղիպոսս, դուք որ հինգ Հայ
աստան վերաշինելու և կառավարելու կարող էք, ինչ
սրտով կը գիտէք նահատակուող Հայաստանն: Եթէ
տասն տարի ևս մնայ մեր հայրենիք այժմու կա-
յութեան մէջ, անկարելի պիտի լինի Հայաստանի և
Հայկական խնդրոյ վերայ այլ ևս խօսիլ: Մասիս իւր
սիգապանձ գլուխ բարձր բռնած, Եփրատ, Ճորոխ,
Տիգրիս և Կուր խոխոջելով կը հրաւիրեն զմեզ յօգնու-
թիւն: պիտի համարձակիմք ուրանալ զնոսա: Ո՛չ ևս
վեհ Մասիք պիտի լինին Հայ լերինք, ո՛չ ևս պիտի երե-
ւայ մեզ Երևան, ո՛չ ևս Կարին, Մուշ, Վան պիտի կոչուին
Հայաստան:

Երբ « Հայաստան ոչ ևս է » վճռէ պատմութիւնն,
ինչ օգուտ պիտի ունենան այլ ևս արտասահմանի վան-
քեր, գրատուններ, թանգարաններ և եկեղեցիներ Հայ-
կական: Առ ինչ պիտի ծառայէ Հայ մատենագրութիւնն
որքան և ճոխ լինի, կամ Հայ լեզուն՝ որքան ևս մշակ-
ուած լինի: Յորժամ Հայաստանի մէջ այժմ առկայեալ
Հայ ճրագն մարի, բսլոր Գաղթական Հայ աշխարհն ա-
րագապէս պիտի լուծուի օտարութեան մէջ:

Հայաստանի մէջ վաշխառութեան տղրուկն, հար-
կահանութեան նշարակն, Զերբէջին դաշոյնն և Քրդ-
ին սուրն Հայ արիւնն սպառել կըսպառնան:

Զէրբէջ նոր գաղթականներ բիւրաւոր հասած են:
Կարնոյ, Վանայ և Բաղէշի կողմանց Քուրդ ցեղապետք
յանձն առած են Քրդական հեծելազօրաց զօրաբաժին մը
կազմել հրամանաւ Սուլթանին և ըստ հրահանգաց Զէ-
բի Փաշայի: Որո՞ւ գէ՞մ պիտի մարտնչին այս բարբա-
րոսք: Ո՛չ՝ Ռուսական խաղախաց գէ՞մ: Քուրդ հե-
ծելազօրաց զօրաբաժին մը, թուով 10,000, կազմեալ էր
նաև 1877 ին և կը հետեւէր Օսմանեան բանակին իր-
եւ նորա լայնատարած ստուերն՝ անգոր և խուսա-
փուկ Ռուսական հեծելազօրաց առջև, և միայն յայն-
ժամ այդ չարաշուք ստուեր չարադեւ մարմին կը լի-
նէր, յորժամ կիյնար Հայ գիւղերու վերայ: Մենք

և Թամանյեոց չափ գիտեմք թէ ինչպիսի ծառայութեան կը կոչուին Քուրդ հեծեալք:

Օսմանցիին բանակ մուտն կանոնաւոր՝ բազմաթիւ Եւրոպացի սպաներով, յորում Գերմանական կրթութիւն առած թուրք սպայից ալ թիւն ամ ըստ ամէ կ'աճի: Ունի նա բանակ մի անկանոն հեծելազօրաց, և վերջապէս բանակ մալ լրտեսաց:

Մեք ինչ ունիմք: Թրոյ փոխան թերթ, և բանակաց զէմ երկուք ու կէս կամաւոր:

Հայեր, մեր երկիր և մեր ժողովուրդ չեն կրնար փրկուիլ այս կերպով: Հայկական խնդրոյ լուծումն յանհուն աւելի դժուարին է քան բազումք կը թուին կարծել: Ոչ դիւանագիտական միջոցներով միայն, ոչ հանրային կարծիքն յազդելով լոկ, ոչ Հայրենասիրական Միութիւններ կազմելով պարզապէս. ոչ կամաւորաց խմբակներու երբեմնակի երեւմամբ ի սահմանագլուխ կրնայ յաղթուիլ ժաման: Մեք կարօտ եմք կազմակերպեալ մեծ զօրութեան մի, որ զանազան կարգի միջոցներն աւելով ի ձեռն յօրինէ այն բարդ և բազմամասնեայ ամբողջական դրութիւն, որ միայն բաւական պիտի լինի պատասխանել թշնամոյն և հակառակորդաց կնճառոտ և բազմակողմանի միջոցներուն և մեր եզրափակ բազմաթիւ կարօտութեանց:

Ո՛ր Հայ եզրայրներ, որ կը կարծէք թէ ազգային փրկութեան գործն յաջողութեամբ առաջ տանելու համար հարկաւոր եղած կազմակերպութիւնն արդէն գոյութիւն ունի, արթնցէք մինչ ժամանակ կայ: Տարին հինգ կամ տասն հազար ֆրանքով ազգ չփրկուիր: Մեր խնդիր միլիոններու կարօտ է: Որ անհատ գործիչ որ ինքզինք բաւական մեծահանձար կը հոչակէ ազգն փրկելու համար և կը խնդրէ որ միլիոնատէր իրենց գանձ, հայրենասէրք իրենց սիրտ, խոհունք իրենց գլուխ դը նեն իւր ամենազօր եւ ամենակալ ափիմ մէջ. կըմոլի: Ով որ կը մեղադրէ մեր վաճառականներն եւ մեծատուներն իր անտարբեր վասն զի իրենց հարստութիւն չեն նուիրեր ազգին փրկութեան, անիրաւ է եւ տղայաժողով: Բազում մարդիկ կրնան յօժարութեամբ նուիրել փոքրիկ գումարներ գործիչի մի, նորա ապրուստին եւ գործունէութեան դիւրութիւն տալու համար, բայց ոչ մէկ մեծատուն հազարաւոր ոսկիներ կը դնէ մէկ անհատի ձեռաց մէջ իրեւ ինքնակոչ փրկչի հայրենեաց: Ոսկիներն զլացող մեծատուներն յայնժամ դարձելի պիտի լինի յորժամ հայրենասէր գործիչը այնպիսի կեդրոնական մարմին մի կազմեն որ արդարեւ ազգային հանգամանք ունենայ, եւ ազգին պատասխանատու լինի իւր գործոց եւ ծախսոց համար:

Այս նկատողութեամբք է որ մեք տարիէ մ'ի վեր կը խօսիմք եւ կը գրեմք ազգային կեդրոնական Յանձնարում մի կազմակերպելու հարկին վերայ, եւ գործիչներէ ոմանց ալ առանձին նամակօք ներկայացուցած եմք այս թելադրութիւն: Այն ոք որ Հայկական խնդիրն իրեն մասնագիտութիւնն ըրած է, պատրաստ կը ցուցնէ ինքզինք այսպիսի կազմակերպութեան մի համար աշխատելու:

Մեք այժմ կը դիմեմք նոյն ինքն գաղթականութեանց, նոցա առջեւ կը դնեմք քննելի եւ սորադրելի ծրագիր մի կազմակերպութեան, զոր պատրաստած եմք խորհրդակ ,ութեամբ համագոյն գործիչի մի հետ:

ԾՐԱԴԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՐԻ

1. Կեդրոնական Յանձնարումն Հայոց պաշտօն պիտի ունենայ միութեան կապ հաստատել մայր Հայրենեաց, գաղթականութեանց, Հայրենասիրական ընկերակցութեանց և ազգային գործիչներու մէջ, և կազմակերպել ու վարել ազգային շարժումն հայրենասիրական:

2. Կեդրոնական Յանձնարմբ պիտի ընտրուին Հայ գաղթականութեանց քուէարկութեամբ, որում պիտի մասնակցին Ռուսիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Ամերիկայի և Ովկիանիոյ Հայք:

3. Ամէն գաղթականութիւն պարտի ունենալ Հայրենասիրական Միութիւն մի կամ Յանձնարում մի որ զբաղի այս քուէարկութեամբ ինչպէս նա և ամէն տեղական մասնակցութեամբ Կեդրոնական գործոց:

4. Տասն ընտրելիներու վերայ զորս անձնւոր գաղթականութիւն իրեն համոզմանց համաձայն կընշանակէ, կատարուին քուէարկութիւնք, և առաւելագոյն քուէ շահող առաջին երեքն հաշակուին անդամ Կեդրոնական Յանձնարմբին:

5. Գաղթականութեանց այն ամէն անհատն որ քուէարկութեան մասնակցիլ կ'ուզէ, պարտի նոյն ժամայն և կանխիկ վճարել մէկ թալեւ կամ հինկ Ֆրանք ազգային սուրբ, իհաշիւ կեդրոնական Մնուակին:

6. Յանձնարմբի անդամաց պաշտօնն ազեւէ երկու տարի, սակայն եթէ յանցապարտ չեն դառնաւ, վերընտրելի լինին, և իրենց ընտրութեամբ իրենցմէ մին անդամակցի յաջորդ Յանձնարմբին:

7. Յանձնարմբին լւրագանչիւր անդամն ընդունի իւր 1000 թալեւի կամ 5000 ֆրանքի տարեկան թոշակ, և իւր բոլոր ժամանակ նուիրէ իւր պաշտօնին: Անդամք պիտի բնակին մի և նոյն քաղաքին մէջ:

8. Յանձնարումն ինքզինք պիտի կազմակերպէ ընտրելով Առեւտրական, Քարտուղար և Գանձապետ, պիտի ունենայ իւր կանոնաւոր նիստեր, քուէարկութեամբ որոջ խնդիրներ, կատարէ հարկաւոր դիւանագիտական գիմումներն թղթով կամ յատուկ պատուիրակութեամբ, խօսի, գործէ և մինչեւ իսկ դաշնագրէ անգամ յանուն Հայոց: Նոյնպէսպիտի հրահանգէ և կազմակերպէ տեղական ոյժերն գաղթականաց, և միութիւն և կանոնաւորութիւն տայ շարժմանց:

9. Կեդրոնական Յանձնարումն պիտի ունենայ Մնուակ մի նոյնպէս Կեդրոնական Ազգային, ուր պիտի մտնեն ազգային բոլոր տուրք, ազգային եւ օտար նուիրատուութիւնք: Կեդրոնական մնուակէն պիտի վըճարուին Յանձնարմբի անդամաց թոշակներն, նոցա պաշտօնական թղթակցութեանց և ուղեորութեանց ծախսերն:

10. Գանձապետն չի պիտի կրնայ իւր քով պահել առաւել քան հարիւր ոսկի, եւ մնացեալ գումարն Անդրդիական դրամատան մէջ աւանդ պիտի դրուին յանուն

Յանձնախմբին :

11. Տարին մի անգամ ընդհանուր ժողով մի պիտի գումարի՝ քուէարկութեան եւ սպառնալից տրոց մասնակցող գաղթականութեանց կողմանէ առաքեալ պատուիրակներով, որք կեդրոնական Յանձնախմբին գործերն եւ հաշիւներն պիտի ընեն. յանցաւոր անդամներն պաշտօնանկ ընելով անոնց տեղնոր ընտրութիւններ ըն լ տան գաղթականութեանց : Պատուիրակաց ճանապարհի ծախքն պիտի վճարուին գայն յընդ գաղթականութեանց կողմանէ՝ ազգային տուրքէն գատ լինելով : Կըլնդրեմք Գաղթականութիւններէն անոնք որ յօծար են այս կազմակերպութեան մասնակցիլ, իրենց կամքն փութան մեզ յայտնել հանդերձ իրենց դիտողութեամբ :

ՈՒՂԵՐՑ ԱՌ Պ. ՃԷՅՄՍ ՊԲԱՅՍ

Առ Մեծապատիւ Ճէյմս Պրայս, Անդամ Բրիտանական Խորհրդարանին :

Մեծապատիւ Տէր :

Մեք, անդամք Հայ Գաղթականութեան Նիւ Եօրքի եւ շրջակայից, կը նկատեմք զանձինս կրկնակի պատուեալ այն պատեհութեամբ զոր շնորհիցիք մեզ տեսնելու զՁեզ եւ արտայայտելու մեր անկեղծ երախտագիտութիւնն փոսն անգին ծառայութեանց չորս մասուցած էք Հայկական դատին :

Մինչդեռ ձեր այս այցելութեան միջոցին ի Միացեալ Նահանգս, Ամերիկացիք բազմաքցուցին տեսնել զհեղինակդ « Ամերիկեան Հանրապետութեան », մեք, Հայքս, տեսչալով տեսչացած եմք տեսնել եւ լսել զձեզ, իրրեւ զմին հիմնարկուաց գալու Հայկական Հանրապետութեան :

Մենք կ'ողջունեմք զՁեզ ոչ իրր պարզ համակրող մի մեզ, այլ իրրեւ անվիանդ ախոյեան Հայկական դատին : ոչ իրրեւ դիւանագէտ մի որ ներկայ վայրկեանի դժուարութեամբ կը գրադի, այլ իրրեւ ճշմարիտ քաղաքագէտ մի որ կը նկատէ Արեւելեան խնդիրն իւր ընտր կնճռութեան մէջ եւ կառաջարկէ անոր կատարեալ լուծման համար գործնական միջոցներ :

Դուք վաղուց համոզուած էք թէ Եւրոպա չպարտի նեցուկ ընծայել գլխովին փոսած Օսմանեան պետութեան, եւ ոչ թողուլ որ նա շարունակէ իւր կործանիչ տէրութիւնն Քրիստոնեայ ցեղերուն վերայ : Դուք այցելած էք մեր սիրելի հայրերէն, եւ ելած էք ի գագաթն մեր փեհապանն Մոսկոյ : Դուք հաճութեամբ ի գին կեցած էք մեր ազգին ի գագաթնակետ տնդր իւր փառաց, եւ իջած էք մեծարարոյ կարեկցութեամբ յանդունդս նորա այժմու աղետից : Բարձրաձայն յայտարարած էք աշխարհի թէ քան զամենայն յուսալի, եւ կարող ցեղն յԱրեւելս հայն է, եւ թէ Հայ տարրն նախաատանմանեալ է քրիստոնեայ քաղաքակրթութեան խմորն հանդիսանալ Արեւելեան ազգաց մէջ : Օսմանեան պետութեան ընդհանուր փոսութեան մէջտեղ դուք գտած էք Հայկական ընձիւղն գեւեւս կենսաւոր՝ ի հեճուկս թարգմտիչ սառնամանեայ հազարամեայ բռնապետութեան : Ասոնք, Տէր, ձեր հաստատուն համոզմունքն

են մեր ցեղին անցեալ եւ ներկայ կենաց խնամոտ ուսումնասիրութեանց վերայ հաստատուած :

Մեք կը պատուեմք եւ կը յարգեմք զձեզ, Տէր զճըշմարիտ բարեկամ մեր ցեղին, զի ձեր լուսամիտ համակրութիւնն նկատմամբ մեր հայրենեաց, ձեր հաւատն ի հրեշարաւորութիւնս մեր ազգին՝ զօրութիւն եւ քաջաւերութիւն եղած են մեզ : Պրայս անունն, զոյգ ընդ անուան մեծին կլատսթանի, անվիանդ ախոյեանին հարստահարելոց, կնիք մ'եղած է հաւատեալու մեր դատի արդարութիւնն յայս քաղաքակրթ աշխարհի :

Եւ այժմ, Տէր, իւր դառն ճգնաժամու մէջ մեր Հայրենիք ձեզ կը նայի հօր ձեռնտուութեան համար : Տաճիկ կառավարութիւնն բազմապատկած է իւր բռնապետութեան արհաւիրքն եւ կը ջանայ զՀայկական խնդիրն թաղել Հայ մարտիրոսաց գերեզմանին մէջ : Աղքատութիւն, քրդական վայրագութիւնք, եւ պաշտօնական անդադար հարստահարութիւնք կը վտարեն մեր եղբայրներն իրենց տուներէն եւ Հայաստան աշխարհ կ'ամայանայ : Դուք, Տէր, այլ ազնիւ բարեկամաց հեա, բազկապող էք տեսնել բարգաւաճ եւ ինքնօրէն Հայաստան մի : Մեք Հայքս, թէ մայր հայրենեաց մէջ թէ գաղթականութեանց, ընտր ուժով գլխադրել կ'աշխատիմք Դրան կործանիչ քաղաքականութեան, յենլով ընական արդարութեան այն զգացման որ այժմ առաւել քան երբէք կը տիրէ քաղաքակրթ աշխարհի մէջ :

Կը հաւատամք, Տէր, թէ դուք ոչ երբէք պիտի դադարիք հարստահարեալ Հայաստանի ախոյեանն լինելէ : մեք վստահութեամբ կը մնամք այն աւուրց յորս հօր խորհրդարանն Մեծին Բրիտանիոյ վերստին եւ վերստին պիտի հնչէ ձեր պերճախօս ջատագովութեամբք մեր Հայրենեաց դատին եւ յորս պիտի տեսնեմք զիրացուցմն մեր ջերմ յուսոյն — Հայաստան օժտեալ ընտիր քրիստոնեայ կառավարչաւ մ'ընդ վերին հոկոյութեամբ պետութեանց, եւ պատիւ, կեանք եւ ստացուածք պաշտպանեալ Եւրոպական կազմակերպութիւն ունեցող բնիկ ոստիկանութեամբ մի :

Հաւատալիք լերուք, Ո՛ր մեծ բարեկամդ մեր Հայրենեաց, թէ ձեր անուն պիտի արձանագրուի մեր ազգային պատմութեան մէջ եւ երախտագիտութեամբ պիտի յիշուի տապալայ սերունդներէն :

Հաճեցէք ընդունիլ զհաւատալի մեր խորին երախտագիտութեան եւ բարձր մեծարանաց :

Եմք, Մեծ. Տէր :

Ի դիմաց Հայ գաղթականութեան Նիւ Եօրքի եւ շրջակայից :

Ձեր խոնարհ եւ հնազանդ ծառայք

(Ստորագրութիւնք)

ՀԱՅՔ ՅԱՄԵՐԻԿԱՅ

Վերջին մի քանի տարիներուն մէջ Հայ գաղթականութեան կարեւոր հոսանք մի ուղղուած է Հայաստանէն դէպ յԱմերիկա, Հին Աշխարհէն ի նորս : Հայ ազգն ծերագոյնն է յաշխարհի, Միացեալ Նահանգացն՝ մանկագոյնն : Հայաստան քան զամենայն ահաւորագոյնս կը կրէ հարստահարութեանց, Միացեալ Նահանգք քան զամենայն ազատական կը վայելին կառավարութեանց : Հայաստանի ժողովուրդն հին քաղաքակրթութեանց ծիլն կը կրէ, Միացեալ Նահանգք նոր քաղաքակր-

Թուլթեանց բարձրացող արեւն է։ Շահեկան է դիտել թէ ինչ կը լինի ազգեցութիւնն այդ արեւու ջերմութեան ի վերայ Հայ գաղթականութեանս նորաբուսիկ բողբոջին։ Կը զօրանայ թէ չորանայ բողբոջն։ Եւ ինչ մասնաւոր խնամոց կարօտ է նա զարգանալու եւ բեղմնաւորելու համար յօգուտ եւ ի փառս մայր Հայրենեաց։

Հայք Ամերիկայի Նահանգաց միոյն մէջ կեդրոնացեալ չեն, այլ ցրուեալ են բազում Նահանգաց վերայ Նիւեօքէն ցֆալիֆոռնիա, Նոքս աւելի բազմութիւն եւ հոծ են սովայն Ուստըրի, Նիւեօքքի եւ Ֆլէշինգի մէջ։ Քալիֆոռնիայի Հոյք ոսկի հանելու զբաղած են ոչ այն համաւաւոր հանքերէն որք կը գտնուին Նահանգին մէջ, այլ հետեւելով խրատուն այն իմաստուն հօր, որ իւր զաւակաց կտակաւ սովորեցուց ոսկոյգանձն գտնել երկիրն մշակելով եւ զայն պտղաբեր եւ բազմաբեր զործելով։ Ըստ մեր տեղեկութեանց, ոսկոյ այդ Նահանգին մէջ այժմ ունիմք բազում հողատէր ազգայիններ։ Ուստըրի ազգայնոց մեծ մասն կ'աշխատին մետաղեայ թելի գործարանին զանազան շրջանակներուն մէջ։ Նիւեօքքի եւ շրջակայից Հայեր հարիւր տեսակ տարբեր գործերով կը զբաղին, ինչպէս նաեւ Պօսթքենի եւ Ֆլիյիսթիայի համազգիք։ Կան պարզ գործաւորներ, բոլոր բազմութիւն եւս են ձեռագէտներն եւ վաճառականք։ Մեր վաճառականաց շատք արեւելեան ապրանք, գորգ եւ կարպետ գլխաւորապէս, կը վաճառեն, եւ ընդհանրապէս կը յաջողին։ Ասոնց մէջ միայն մի քանին են քսան տարիներէ ի վեր հաստատուալ վաճառականներ, որք միտնգամայն գործարանատէր են, իսկ մնացեալք բազաւաւորապէս են, ժրջան երիտասարդներ եւ մեծ յոյս կայ որ այս նորափթիթ վաճառականներու շատերն ապագայում հանդիսանան մեծամեծ վաճառատուններու գլուխներ։ Կան նաեւ բազմութիւն ոստայնակը, եւ փորագործիչք, եւ բուական թուով ժամագործներ, գերձակներ, բժիշկներ, նկարիչներ, մէկ հրապարակախօս եւ մէկ երէց։ Վերջին ժամանակներս կազմարար, տպարան եւ լրագրագետ եւս երեւան եկին։ Ունիմք նաեւ բազմութիւն ուսանողներ բժշկական, աստուածաբանական եւ գիտական։

Այս թուումն բաւական է ցուցնելու թէ Հայք Ամերիկայի բնիկ զանազան դասակարգերու ի հուպ գալով՝ միջավայրի ազգեցութիւններն լիովին կը կրին։ Իրենց գործին մէջ աւելի հմուտութիւն կըստանան քան զիրենք յաւաքողէմ ժողովրդի համար եւ հետ գործելով։ Շատեր կ'ուսանին բաւորովին նոյն գործեր, եւ կը վարժուին այնպիսի գործեր եւ մաքեաներ գործածելու որոց ունեններն անգամ չէին լսած։ Կ'ուսանին ոչ միայն նոր գործեր, այլ եւ կը սովորին գործելու նոր եղանակաց։ Տաճկաստանի մէջ

արդարութիւնն չէ միայն որ կալ կը քալէ եւ գանդալ կը շարժի, անդ ամենայն յամենայնի յամբ է եւ գանդալ։

Հայք Նոր Աշխարհիս մէջ նոր կեանք մի ապրիլ կը վարժուին, ուր քալել, խօսիլ, գործել արագ է, ուր ժամանակն ոսկի է, եւ ժամագրութիւնն խիստ եւ յարգելի։

Անցեալ օր այցելեց ինձ Հայ երիտասարդ մի, որ ըսաւ թէ նոր կը հասնէր Արեւելքէն։ Պարզապէս իւր ուղիղ նստուածքէն դուշակնցի թէ ինքն այս երկրի մէջ բուական երկար ժամանակ ապրած լինելու էր, եւ արդարեւ այնպէս գոյալիրութիւնն, երկրորդ անգամ լինելով կուգար Ամերիկա։ Մինչեւ անգամ հայերէն լեզուի արտասանութիւնն կը բարեփոխ յանգղիտիս միջավայրիս։ Մեր երիտասարդք, փոխանակ «կրօնի», «ծնունդ», «սրբաճ», «կողմն» «եւ այլն» ըսելու, ըսե՛ր «կրակ», «ծնունդ», «սրբաճ», «կողմն», «եւ այլն», իբր միավանկ, ինչպէս իբրք են։

Զգիտեմք դեռ թէ Հոյոց հարիւրն քանին միայն Ամերիկեան քաղաքացի եղած կամ լինելու ուղղութեան մէջ են, սովայն սա՛յայտ է թէ ամենեքին կը վայելին ազատ երկրի եւ կառավարութեան առաւելութիւններն, Հոս կառավարող եւ կառավարել ցեղեր չկան, եւ Հոյք կը վարժուին բարձր բունել իրենց գլուխ նոյն իսկ միլիտանտներն եւ Նախագահին տուել։ Միայն մէկ բան խստիւ աւագելուած է այս երկրի բնակչաց, ոյսինքն այլոց ազատութեան, ստացած ց, պատուոյն եւ կենաց վնաս ընելն։

Այս ամենայն կը ցուցնեն թէ Միացեալ Նահանգաց գիտութիւնք, աբուեւորք, ընկերական եւ քաղաքական սովորութիւնք զգալապէս կը տարբանան Հոյ գաղթականութեան մէջ։ Այլով բանիւ, Հոյք Ամերիկոյցի կը լինին չափով մի՛ թէ եւ չլինին քաղաքացի։ Շատ բաներու մէջ կը վարժուին, կը խորհին եւ կը զգան Ամերիկացւոյ պէս։ Մեր ազգի յատկութեանց մին է ինքը ինք օտար միջավայրի յարմարցունելու եւ օտար քաղաքակրթութիւն իւրացունելու ընդունակութիւնն։ Հոյք չունին այն անգղիական հպարտութիւն որ խորհիլ կուտայ թէ ամէն ինչ որ իւրենցն է, կուտուեալ եւ ազնիւ է։ Մեր ցեղ աւելի նման է Ֆրանսոցոյ, նոցա պէս անկեղծամիտ իմացականութիւն մ'ունի, եւ պատշաճ է ոյլոց լուր բաներուն յորդ ընծայելու այն կերպիւ որ քան զամենայն անկեղծն է, այսինքն՝ նմանողութեամբ։ Գովելի է ոյս։ Բայց մեք Հոյքս փռանսացիէն, Յոյնէն եւ Պուլղարէն կը տարբերիմք այնու զի սահման եւ չափ չեմք գներ մեր հետեւեղութեանց, սահման եւ չափ որպիսիս պարտին դնել Հայրենասիրութիւնն եւ արդար ազգային հպարտութիւն։


թիւն. Առաւել քան զչափն յարգելով օտարինն և մեք զմեզ իբր թէ գերագոյն ցեղերու առջեւ նըկուն զգալով՝ կը զոհեմք երբեմն մեր ազգորոշ հանգամանք, և կ'օտարանամք անզգալի իմն եղանակաւ:

Այս եղած է բազում ուրեք Հայ գաղթականաց ընթացքն և բազմն: Սակայն պարտիմք աստէն յուսելու թէ Ամերիկայի Հայոց Ըթօնքն «յնպէս» չէ: Աշխարհի ո՛ր և իցէ կողմն չկայ, որքան գլխեմք, Հայ գաղթականութիւն մի որ առաւել նախանձաւոր լինի իւր ազգայնութեան: Սոցա հայրենասիրական եռանդն ևս գովութեան արժանի է:

Նիւ Եօրքի մէջ Հայկական Միութիւնն՝ հինգ տարիէ ի վեր վաւարան մէ եղած ազգային զգացումները արծարծելու: Այդ միութեան ծոցէն դուրս գտնուող ազգայինք եւս վերջին երկու տարիներու մէջ գործօն մասնակցութիւն ունեցած են

ազգային շարժմանց, և աւելի ազդուական եղանակօք: Ուստի Հայք ի գլուխ իւրեանց ունին զԱրժ. Հոյր Սարաճեան Ծ. Վ., որ այնքան անձնուիրութեամբ կը հովուէ զժողովուրդն և որ յաջողեցաւ, ի զարմանս ամենից, և չնորհիւ առատաձեռնութեան ժողովրդեանն, կառուցանել առաջին Հայկական Եկեղեցին ի Միացեալ Նահանգս:

Խոստովանինք, այս յօդուած աւարտելէ առաջ, թէ մեր գաղթականութեանց մէջ ամէն ինչ վարդապոյն չէ: Դեռ բազում ինչ կը մնայ ընել նորեկ հայրենակցոց առջեւ յաջող գործունէութեան դռներ բաց ընելու և նիւթական և բարոյական բարգաւաճումն փութացունելու համար՝ կը յուսամք թէ «յսպիսի անօրինութիւնք աւելի միարան և սիրալիմ կերպերով պիտի լինին այսուհետեւ յօգուտ գ. ղ. թականութեանցս և ի փառս ազգին:



ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԲԱՂԱՆԻՔ


ՋՈՒՐՆ ԻՐՐ ԴԱՐՄԱՆ

Չկայ դեղ մի որ այնքան պատուական և աժանագին ըլլայ միանգամայն ինչպէս ջուրն է: Ընտանեկան գեղերու մէջ պարտ է տալ նմա առաջին տեղն, վասն զի ոչ բժշկի գեղագիր հարկ է և ոչ գեղազործի դիմել զայն ստանալու համար: Ջուրն գրեթէ միշտ պատրաստ է. արագահաս քան զմերձագոյն դրացին: Առանց վճարելու կը ստանաս. գոյն, վասն զի անգին է: Չհնամար որպէս այլ բազում գեղեր, որովհետեւ բնութիւնն առատօրէն կը հայթայթէ գոյն մաքուր և նորոգ: Մովբեր իբր անսահման կախումներ, ամպերն իբր ջրի մեծամեծ տիկեր, հողմերն իբր անխոնջ ջրկիրներ անդադար գրադած են ի պատրաստել այս կենսաւէտ հեղուկ մաքուր և թարմ. իսկ լերինք որպէս ահագին սպունգներ կը ծծեն և զերգ անխորտակելի շիշեր այդ հեղուկէ մեծ քանակութեամբ կը պահպանեն իրենցներսն և կը մատակարարեն զայն տարւոյ ամէն եղանակաց մէջ:

Ջրոյ գործածութիւնն իբր գարման ախտից և ցաւոց այնքան հին է որքան հին են ցաւք կամ որքան

հին է պատմութիւնն: Որովհետեւ ախտից բնական պատճառներն անձանթ էին և ցաւք գերբնական կամ դիւանային ազդեցութեան կընծայուէին: Բժշկութիւնն ալ ի հնումն կը կատարուէր գլխաւորապէս քրմաց ձեռամբ: Ի մեհենից հովանոյն ներքեւ, Հազարաւոր տարիներէ հետէ գործածուած է ջուրն իբր տարր բժշկիչ և սրբբիչ: Հնդիկն կը մխրճի տակաւին Գանգէսի սրբազան ջուրց մէջ կամ այն սրբազան աւազանաց մէջ որ կը շրջապատեն մեհեններ:

Վարդապետի տօնին առթիւ իրարու վերայ ջուր նետելու Հայկական սովորութիւնն որ անյիշատակ ժամանակներէ հետէ կայ, է հաւանականօրէն յընթացս դարուց մեղմացեալ ձեւն ազգային առողջարանական լըուացման կամ մխրճման մի զոր րովանդակ ազգն կը կատարէր իբր կրօնական տօն տարւոյն այս ինչ օրն, ամառ եղանակին: Հայաստանի շման լեռնային և ջրաշատ աշխարհի մը մէջ այսպիսի տօն մի դիւրաւ կրնար ծագիլ: Քրիստոնէութեան հաստատմանէն յետոյ ևս մեր վանքերն սրբազան բժշկութեան կեդրոններ ե-



դած են և են ցարդ . Լերանց կրծոց վերայ կառուցեալ , ցուրտ ջրի աղբերց մօտ , վանքերն օգտափութեան հիւանալի վայրեր են , և բիւրք կը բժշկուին ուխտագրնացութեամբ :

Թէպէտև աճուստին ի ժամանակայ Հիբոնիատայ , հօր բժշկական արուեստին , ջուրն նշանակուած է իբր դեղ ցուց ինչ , և գործածուած է կրօնական տեսակէտէ բոլորովին անկախաբար , սակայն ներկայ դարուս մէջ է որ այդ տարր գիտական , բնաստական հիմանց վերայ սկսած է գործածուիլ իբրև դարման պէտպէս ցաւոց :

(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Many thanks to the *New York Sun* for the following kind passage in its issue of the 7th Dec. respecting the HAIK.

"The first issue of the first Armenian periodical ever published in the United States has just appeared in this city. It is called HAIK, and will be given out twice every month. The aim of the editor, Dr. M. S. Gabriel, is to make his publication cosmopolitan, and to crowd its eight curious-looking pages with matter of interest to Armenians all the world over. Politics and hygiene will receive the new periodical's special attention.

We heartily thank also the *New York Morning Journal* for its courtesy of reproducing the heading of the HAIK in its issue of the 14th Dec. On that occasion the Journal says:

"The HAIK is a paper which it is hoped will fill the same position with regard to Armenia that the Irish World does with regard to Ireland. The two countries are in much the same position. The projectors of the Armenian paper hope that they will be able to assist their struggling and oppressed fellow-countrymen in the same way that Irish editors in America have assisted their down-trodden compatriots.

The paper will be issued twice a month, and as there is a large colony of Armenians in this country will probably reach a large circulation. Dr. M. S. Gabriel will devote a large part of his time to editing it.,,

Նամակ Մասաչուսեցի — Ապրիլի դու , և ապրիլ «ՀԱՅՔ» . Ընտիր թերթ , ընտիր թիւ , ընտիր փաստ . Արդարեւ այս թուոյ պարունակութիւնն անսովորական արժէք և կարեւորութիւն ունի . Երբ սկսայ մի անգամ կարգալ , չկրցայ կանգ առնուլ մինչև աւարտեցի ամբողջ թերթն : Նպատակ ունիմ դարձեալ կարգալ և աւելի ուշով :

— Լօնտօնեան Թայմզ ի ուղղեալ հեռագրի մի մէջ կը յիշուի զրոյց մի թէ Յակոբ փաշայի լուսանկարներն գտնուած են ի Պօլիս՝ վրան գրուած լինելով « Յակոբ իշխան Հայաստանի » : — Էտիմպուրի « Սքօթիշ Լիտըր » ն կը տեղեկանայ թէ Սուլթանին բժիշկներն խորհուրդ տուած են նմա հրաժարիլ մտաւորական աշխատութենէ :

— Լօնտօնեան Տէյլի Նիւզ ն Նոյ . 28 թուով հեռագիր մի կը հրատարակէ , յորում կ'ըսուի թէ Տօքթ . Թի . րաքեան և Վաչրամ Պէյ դատաւարտուած են հինգ տարուան բանտարկութեան :

Կը լսենք թէ Ե . Դ . Ը . Հայկական ճիւղն Յունի . 2 ի երկնային զուարճալի ճաշկերոյթ մի պիտի ունենայ , ուր արեւելեան նուագածութիւն պիտի լինի , և ուր բոլոր Հայեր պիտի հրաւիրուին ձրի տոմսակներու բաշխմամբ :

Հայկական եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն կը բաղձայ ծանուցանել թէ ամէն կիրակի կէս օրէ յետոյ ժամ 1 3/4 ին կրօնական պաշտօն կը կատարուի ի Ս . Ոսկերեքան Մատրան , 59 րդ փողոց և 7 րդ Ավլանիս :

Անգղիերէն ընթերցող կրնող մեր ազգայնոց կը յանձնարարեմք Լօնտրայի Արմէնիան ստանալ , վստահացունելով զիրենք թէ նորա ամէն մէկ թիւն լի պիտի գտնեն սքանչելի խմբագրականօք և զգուշաւոր թղթակցութեամբ :

Բրիտանական խորհրդարանի Նոյ . 27 ի նստին մէջ Պ . Պրայս և Պ . Սթիվենսըն խնդրեցին որ Ասիական Թուրքիոյ Գրիստոնէից վերաբերեալ թղթերն ներկայացուին . Պ . Ֆէրկիւսըն չկրնալով որոշ կերպիւ ըսել թէ Մնուկէն առաջ պիտի պատրաստած լինէին թղթերն , Պ . Պրայս ծանոյց թէ իւր հարցապնդումն պիտի կրկնէ : Այս գալով Պիոս Պուքն պիտի պարունակէ անշուշտ Պ . Գլիֆօրտ Լոյտի տեղեկագրութիւնքն :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀԱՅՈՑ
Ի ՆԻԻԵՐՔԻ, ՅԻՍԹԸՐՆ ՍԹԱՐ ՀՈՂ

Նիւեօրքի և շրջակայից Հայք ընդհանուր ժողով մը ունեցան Դեկ. 13 (1890 ին. 10) րդ Գլխաւոր նիւթ եղաւ նամակ մի, Ամերիկացի միսիօնար Պատ. Պարնիմէ գրուած Սարքերէն եւ հրատարակուած Պոսթօնի «Քօնկրիկէշնէլիսթ» թերթին մէջ: Տիար Մարաշլեան նամակին հայերէն թարգմանիւթ իւրեր կարդաց, և Տքթ. Աթթարեան անգղիերէն քննադատութիւն մ'ըրաւ, յորում քաւ թէ Պատ. Պարնիմէ և նմանները, որք Օսմանեան կառավարութեան հաճելի լինելու խօսքեր կընեն ուրանալով գիշարութիւնն անգամ Հայկական խնդրոյ, որ չարաչար հարստահարեալ Քրիստոնեայ ժողովրդեան մի համար քաւ կառավարութեան խնդիրն է, որքան տարբեր են իրրեւ առաքելով կամ միսիօնար Քրիստոսի՝ Յովհաննէս Մկրտչէն որ իւր գլուխ տուաւ անիրաւ իշխան մի յանդիմանելով անաշտապէս: Յետոյ նոյն նստի տեսնալեա Տիար Քրիշչեան ընթերցաւ հետեւեալ որոշումներն որք միաձայնութեամբ ընդունուեցան ժողովոյն կողմէն:

Նկատելով որ «Քօնկրիկէշնէլիսթ» ի նոյ. (1890) ի թուոյն մէջ «Հայկական խնդիրն» խորագրով յօդուած մի, Ամերիկեան Պօսթ ընկերութեան Միսիօնար Պատ. Հ. Ն. Պարնիմի կողմէն գրուած, այս ժողովոյ ուղղութեան առարկայ եղած է, և նկատելով որ յիշեալ յօդուածին մէջ թղթակիցն քաւ իրազեկ մէկու մի համարձակութեամբ խօսած է, ուրանալով Հայկական խնդրոյ մի գոյութիւնն, և Հայազգին կրօնին վերայ յարձակած է:

Կ'որոշեմք. Ա. թէ Պատ. Պարնիմ որպիսի սխալ մի կը գործէ Հայկական խնդիրն ուրանալով, մինչ եւրօպական մեծ Պետութիւնք, Պոլսին վեհաժողովայ մէջ, ոչ միայն ճանաչեցին Հայկական խնդիրն այլ հաստատեցին անոր մեծ կարեւորութիւնն նուիրելով այնմ յատուկ յօդուած մի Պոլսին Դաշնագրոյ մէջ, և մինչդեռ բովանդակ քաղաքակիրթ աշխարհի Մամուլն և քաղաքագէտք որպիսի է Վսեմափայլ Ռ. Է. Կլաւտըն և ազգերն ուսումնասիրող խորիմաստ անձինք զերթ Մեծապատիւ Ճէյմս Պրայս, կը վկայեն թէ հին Հայ ազգն գործուեցայ կենդանու յետմէ կը փայլի տակաւին և թէ նորա ազգահովութեան խնդիրն սրբազան է յաշո Քրիստոնեայ եւրօպայի և Ամերիկայի:

Կ'որոշեմք. Բ. թէ յօդուածագիրն աշխատելով ապացոյցանելու թէ Հայաստանի մէջ բնակեալ Հայք անտարբեր են իրենց անկախութեան կոչութեան մասին և իրենց դժեղակ նեղութեանց նկատմամբ, ինքն իրեն կը հակասէ յորժամ կը յիշէ թէ այդ ազգին գլուխն եղող Պատրիարքն ինք հրաժարած է իւր պաշտօնէ հանդու Օսմանեան կառավարութեան՝ բողոքած լինելու համար այն հարստահարութեանց դէմ որոց ենթարկեալ է Հայ ժողովուրդն:

Կ'որոշեմք. Գ. թէ յօդուածագիրն Հայոց անցեալ և ժամանակակից պատմութեան վերայ իւր ողբալի տգիտութիւն կը նշաւակէ յորժամ նոցա քաղաքական ընդունակութիւններն կ'ուրանայ և կը նկրտի Հայ գաղթականութեանց հայրենասիրական գործունէութեան կարեւորութիւնն իբր չեղին ներկայացունել:

Կ'որոշեմք. Դ. թէ մեծ զարմանք է մեզ տեսնել թէ

Ամերիկեան Պօսթին նման մարմնոյ մի ներկայացուցիչն որ լիուրի պատեհութիւն ունեցած է կէս դարէ ի վեր ճանաչելու Քրիստոնեայ Հայ ժողովուրդն, կը համարձակի անոնց վերայ խօսիլ իրրեւ «անուամբ Քրիստոնեայ» ներու վերայ, մինչդեռ Անգլիոյ Եպիսկոպոսական պատկառելի եկեղեցին անգամ ամէն ուրեք կը ճանաչէ Հայ եկեղեցին իբր Քրդ եկեղեցի, և մինչդեռ մեր տասնեւհինգ դարուց մարտիրոսներու պատմութիւնն Քրիստոնեական եկեղեցւոյ ժառանգութիւնն է. և թէ մեծ ցաւ և զայրոյթ կը պատճառէ մեզ այն զի յօդուածագիրն իբր Ամերիկացի և իբր միսիօնար, այսպէս կ'անուանարիկէ Հայ եկեղեցին և ապա, խնդրելով Պօսթի օգնութիւնն Արեւելեան խնդրոյ լուծման համար՝ ի վաճառ կը հանէ մեր ժողովրդեան վկայերն, և թէ դատապարտելով կը դատապարտեմք յիշեալ յօդուածոյ ոգին և տառն և կը յայտարարեմք թէ ու իցէ անձ որ այսպիսի կարծիքներ ունի և կը հրատարակէ, իբր միսիօնար կամ այլապէս, վնաս մանաւանդ քան օգուտ կը գործէ Արեւելեան Քրիստոնէից, և թէ այնպիսի խօսքեր որք երբեմն կ'երեւին Ամերիկայի կրօնական Մամուլն մէջ, ոչ այլ ինչ կրնան արտադրել բայց միայն ուժացումն Հայ ժողովրդեան համակրութեան և յարգանսոց առ Քրիստոնեայ Ամերիկայ:

Կ'որոշեմք վերջապէս որ այս մեր բողոք Միացեալ Նահանգաց բոլոր կրօնական և աշխարհական մեծ թերթերուն տրուի ի հրատարակութիւն:

LANTERM'S
Hotel and Restaurant,

40 UNION SQUARE,

New York City

16.րդ և 17.րդ փողոցաց միջև, արեւելեան կողմն:

Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ խոհարարութիւն Փրանսական:

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th Avenue,

NEW YORK.

Դեղօրեք եւ քիմիական նիւթք:

Դեղագիրք կը պատրաստուին խնամով:

H. EGUINIAN,

BOOK, JOB AND NEWSPAPER
PRINTING,

100 Centre St, New York City.

ՏՕՐԹ Մ. Ս. ԳՍԱՐԻԷԼԵԱՆ

Հիւանդ կ'ընդունի առաւօտեան ժամ 9 էն ց 12 և կէս օրէն յետոյ ժամը 6 էն 7 ր:

Մ. Ս. ԳՍԱՐԻԷԼԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՆ

1. Վերականգնումն Հայոց 1879. սպառած
2. Հայ բողոքականութեան անցեալն ու ապագայն.
Գին 20 սենթ. փոսթի ծախքն խմբագրութեանս վերայ:

ՆԻԻ ԵՈՐՔ. — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ.